ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«1» ապրիլի 2020 թվականի N 169-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի 3-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով, ***որոշում եմ.***

1.Դավիթ Գագիկի Մաթևոսյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0338-0113 կադաստրային համարի հողակտորում տալ ջերմոցի կառուցման շինարարության թույլտվություն:

2.Դավիթ Գագիկի Մաթևոսյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0338-0113 կադաստրային համարի 2345,68 քառ.մ մակերեսով հողակտորի նպատակային նշանակությունը համարել փոփոխված գյուղատնտեսական նշանակության հողերից արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա, ըստ գործառնական նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի:

3.Պարտավորեցնել Դավիթ Գագիկի Մաթևոսյանին՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

4.Աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանին՝ հողի նպատակային նշանակության փոփոխությունը ներառել հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշռում:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Դավիթ Գագիկի Մաթևոսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. ապրիլի 1
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«3» ապրիլի 2020 թվականի N 170-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացիներ Էմմա Վարդանի Կարապետյանի (ծնված՝ 1936 թվականի հոկտեմբերի 26-ին) և Հասմիկ Ալբերտի Մնոյանի (ծնված՝ 1960 թվականի հոկտեմբերի 5-ին) լիազոր անձ Տիգրան Կամոյի Հարությունյանի (ծնված՝ 1992 թվականի հունիսի 11-ին) դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել Էմմա Վարդանի Կարապետյանին և Հասմիկ Ալբերտի Մնոյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր 1-ին այգեզանգվածի 30-րդ թաղամասի թիվ 48 հասցեի այգեգործական հողամասում ինքնակամ կառուցված շինությունները (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 25112019-07-0082 վկայական, անհատ ձեռնարկատեր Հակոբ Մարգարյանի կողմից 2020 թվականի մարտի 10-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն անհատ ձեռնարկատեր Հակոբ Մարգարյանի կողմից կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Էմմա Կարապետյանին և Հասմիկ Մնոյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր 1-ին այգեզանգվածի 30-րդ թաղամասի թիվ 48 հասցեի այգեգործական հողամասում 1988 թվականին ինքնակամ կառուցվել են՝ բնակելի տուն նկուղ 61,1 քառ.մետր, պարիսպ՝ 2,0 քառ.մետր արտաքին մակերեսներով (կառուցման տարեթվերի վերաբերյալ համայնքապետարանում տվյալները բացակայում են, որի համար հիմք են հանդիսացել քաղաքացիներ Էմմա Կարապետյանի և Հասմիկ Մնոյանի դիմումում նշված և անհատ ձեռնարկատեր Հակոբ Մարգարյանի կողմից չափագրված և հաստատված հողամասի հատակագծում նշված տարեթվերը):

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 22.1-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Էմմա Կարապետյանին և Հասմիկ Մնոյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր 1-ին այգեզանգվածի 30-րդ թաղամասի թիվ 48 հասցեի այգեգործական հողամասում ինքնակամ կառուցված շենք-շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շենք-շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1.Էմմա Կարապետյանին և Հասմիկ Մնոյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր 1-ին այգեզանգվածի 30-րդ թաղամասի թիվ 48 հասցեի այգեգործական հողամասում ինքնակամ կառուցված բնակելի տուն նկուղը՝ 61,1 քառ.մետր, պարիսպը՝ 2,0 քառ.մետր արտաքին մակերեսներով, համարել օրինական:

2.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել համայնքի ղեկավարի տեղակալ Նորայր Սանթրոսյանի վրա:

3.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Էմմա Կարապետյանին և Հասմիկ Մնոյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. ապրիլի 3
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«7» ապրիլի 2020 թվականի N 171-Ա

ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 84-Ն որոշման 2-րդ կետը, ***որոշում եմ.***

1.Ջրվեժ համայնքի 2020 թվականի բյուջեում կատարել վերաբաշխում և 07.2.1 խումբ ենթախմբի 4638 հոդվածը պակասեցնել 120.0 հազար դրամով, 4655 հոդվածն ավելացնել 120.0 հազար դրամով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. ապրիլի 7
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«7» ապրիլի 2020 թվականի N 172-Ա

ԱՆԱՀԻՏ ԿԱՌԼԵՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 15-ի թիվ 4-Ն որոշմամբ հաստատված չափորոշիչները, Ջրվեժ համայնքի սոցիալական խնդիրների ուսումնասիրման հանձնաժողովի եզրակացությունը Ջրվեժ համայնքի Զովք գյուղի 6-րդ փողոցի թիվ 3 տան բնակիչ Անահիտ Կառլենի Հովհաննիսյանի ընտանիքի վերաբերյալ, այն է՝ Անահիտ Կառլենի Հովհաննիսյանը բնակվում է ընտանիքի չորս անձով, ինքը և ամուսինը՝ Կիրակոս Միշայի Հովհաննիսյանը, ներկայումս չեն աշխատում, ընդ որում՝ Կիրակոս Հովհաննիսյանը հանդիսանում է երրորդ կարգի հաշմանդամության թոշակառու, ունի սիրտ-անոթային համակարգի լուրջ խնդիրներ և վիրահատման անհրաժեշտություն, նրանց խնամքի տակ են երկու անչափահաս երեխաները՝ Երանուհի և Ալիկ Կիրակոսի Հովհաննիսյանները, ծնված՝ 2008 և 2011 թվականներին, ընտանիքը չունի տարրական կենցաղային պայմաններ և ընտանիքի ֆինանսական և սոցիալական վիճակից ելնելով Անահիտ Կառլենի Հովհաննիսյանը դիմել է համայնքապետարան՝ դրամական օգնություն ստանալու խնդրանքով, ***որոշում եմ.***

1.Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Անահիտ Մարգարյանին՝ բյուջեի համապատասխան հոդվածից Անահիտ Կառլենի Հովհաննիսյանի ընտանիքին ցույց տալ դրամական օգնություն՝ 30 000 (երեսուն հազար) դրամ գումարի չափով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Անահիտ Կառլենի Հովհաննիսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. ապրիլի 7
գ. Ջրվեժ